ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.08.2020թ.),

քննելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Մեդովկա, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ և ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված (14.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/75 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.06.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից վերջինիս կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Մեդովկա, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ և ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերի նհամաձայն՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» բաց մրցույթը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Վերոհիշյալ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ն:

28.07.2020թ. ժամը 16:30 հրավիրվել է գների շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Ընթացակարագի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի համար հրավիրված բանակցություններին ներկայացած «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» և «Տ-Քոնսթրաքշեն» ՓԲԸ-ները, ինչպես նաև «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն իրենց գնային առաջարկները նշված չափաբաժինների մասով թողել են անփոփոխ:

Նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ագաթ-777» ՍՊԸ-ն:

«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 28.07.2020թ. ընդունվեց պայմանագիր կնքելու մասին որոշում, հայտարարությունը 30.07.2020թ. հրապարակվեց www.gnumner.am կայքում և սահմանվեց անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 38-րդ կետի 1-ին մասի համաձայն՝գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը հաղորդում է տեղեկատվություն գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի

գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից:

Հրավերի 8.6. կետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են

միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից...:

Ինչպես արդեն նշել ենք, նշված Ընթացակարգի շրջանակներում 28.07.2020թ. ժամը 16:30 հրավիրվել է գների շուրջ միաժամանակյա բանակցություններ և մինչև բանակցությունների մեկնարկը հանձնաժողովի նախագահը ներկայացրել է բանակցության ընթացակարգը՝ այն է, յուրաքանչյուր մասնակից եթե ցանկանում է կատարել գնային առաջարկ, պետք է առաջարկը գրանցի իրեն հատկացված թղթի վրա, ստորագրի և բարձրաձայնի իր առաջարկը, սակայն հատկացված ժամանակի ընթացքում 2-րդ չափաբաժնի մասով մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակների կողմից ոչ մի առաջարկ չի բարձրաձայնվել: Մասնակիցներին հատկացված թերթիկները հավաքելուց հետո հանձնաժողովի

նախագահը հայտարարել է, որ կա գնային առաջարկներ մի քանի մասնակցի կողմից և հնչեցնում առաջարկները, բայց քանի որ նախագահողը հնչեցնում է առաջարկները հատկացված ժամանակի ավարտից հետո, մասնակիցները հնարավորություն չեն ունեցել վերանայել իրենց գնային առաջարկները և ներկայացնեն նոր առաջարկներ: Ընդ որում, բանակցությունների համար նախատեսվել է ընդամենը երեք րոպե:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ բանակցությունների այդ 3 րոպեների ընթացքում ոչ մի մասնակից իր ներկայացրած գնային առաջարկը չի հրապարակել մյուս մասնակիցների համար, այլ գնահատող հանձնաժողովին ընդամենը տրամադրել է գրավոր իր կողմից ստորագրած փակ գնային առաջարկ, որի չափի վերաբերյալ մյուս մասնակիցները տեղյակ չեն դարձվել, ինչի հետևանքով մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցները այլևս չեն կարողացել վերանայել իրենց գնային առաջարկները՝ առաջարկված գնային առաջարկների մասին որևէ տեղեկատվություն չունենալու հիմքով:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերության և Հրավերի 8.7-րդ կետի պահանջները, ավելին, բանակցությունների անցկացման ողջ տրամաբանությունը, քանի որ, ըստ էության, բանակցություններ տեղի չեն ունեցել, ինչի արդյունքում «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ն զրկվել է իր գնային առաջարկը վերանայելու ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված հնարավորությունից:

Գտնում ենք, որ վերոհիշյալի արդյունքում խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մասնակիցների գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները:

Վերոհիշյալ նորմերի խախտումներն իրենց հերթին հանգեցրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքի խախտմանը:

Նշված խախտումը հնարավոր է վերացնել, իսկ վնասը կանխել՝ բացառապես գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու եղանակով՝ ՀՀ

կառավարության 526-Ն որոշմամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներով անցկացնելու միջոցով:

բ) Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հրավերի 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Տվյալ պարագայում, Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, մասնակիցները համապատասխանաբար ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ագաթ-777» ՍՊԸ	704 267 600	485 619 546	48 561 955	106 836 300	641 017 801
2	«Զեթ-Պրոֆ» ՍՊԸ	704 267 600	520 610 119	-	104 122 024	624 732 143
3	«Բաղրամյանշին» ՍՊԸ	704 267 600	400 000 000	215 634 848	123 126 969.60	738 761 817.60

Գնումների մասին օրենսդրության խախտմամբ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում մասնակիցները ներկայացրել են իրենց հետևյալ վերջնական, վերանայված հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ագաթ-777» ՍՊԸ	465 732 087	32 601 246.3	99 666 666.7	598 000 000
2	«Զեթ-Պրոֆ» ՍՊԸ	500 000 000	-	100 000 000	600 000 000
3	«Բաղրամյանշին» ՍՊԸ	500 000 000	83 333 333.33	116 666 666.67	700 000 000

Սույն Ընթացակարգի շրջանակում, «Ագաթ-777» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 485 619 546 ՀՀ դրամ, «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 520 610 119 ՀՀ դրամ:

Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում մասնակիցները իրենց ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել են ոչ միայն նույն գնային առաջարկներով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքներից, որի արդյունքում «Ագաթ-777» ՍՊԸ-ի ինքնարժեքը նվազեցվել է և կազմել է 465 732 087 ՀՀ դրամ՝ նախկին 485 619 546 ՀՀ դրամի փոխարեն, իսկ «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի ինքնարժեքը նավեզեցվել և դարձել ՝ 500 000 000 ՀՀ դրամ՝ 520 610 119 ՀՀ դրամի փոխարեն:

Վերոնշյալով պայմանավորված, գտնում ենք, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժել «Ագաթ-777» ՍՊԸ-ի և «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի հայտերը, հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարները, իսկ այդ նվազեցված գնային առաջարկը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր նշված մասնակիցների ներկայացրած հայտերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին ընթացակարգի 2-րդ

չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2.պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի և «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ:

3.պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու և անցկացնելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 10:40-ին և 26.08.2020թ. ժամը 10:15-ին և 11.09.2020թ. ժամը 12:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կից ուղարկում եմ ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից 2020 թվականի հուլիսի 28-ին կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի բանակցությունների ձայնագրությունը:

Անհրաժեշտ է հիշեցնել, որ «Տրանսունիվերսալ» փակ բաժնետիրական ընկերության առաջարկած գինը 14 921 515 ՀՀ դրամով ավելի է, քան բանակցությունների արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «ԱԳԱԹ-777» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առաջարկած գինը:

Միաժամանակ տեղեկացնում եմ.

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի,

հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

Մրցույթի ընթացքում մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաշվարկված ինքնարժեքներ, որոնք բնականաբար տարբեր են, հաշվարկված են տարբեր մասնագետների, տարբեր տեխնոլոգիաների կիրառման ու տարբեր նյութերի ընտրության արդյունքում և ի սկզբանե չեն համապատասխանում կազմված նախահաշվին: Այս երևույթը բավականաչափ տրամաբանական է ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում և մրցակցային ձևով տվյալ աշխատանքների գնումները կազմակերպելու հանգամանքով պայմանավորված:

Մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկի հավելվածում «ընդհանուր գինը» (կամ որ նույնն է՝ մասնակցի գնային առաջարկը) բաղկացած է «ինքնարժեք», «շահույթ» և «ավելացված արժեքի հարկ» բաղադրիչների հանրագումարից:

Բողոքաբերը մեջբերում է Օրենքի վերը նշված դրույթը՝ հիմնավորելու, որ մասնակիցները չեն կարող բանակցությունների արդյունքում իրենց գնային առաջարկը (հավելվածում նշված «ընդհանուր գինը») նվազեցնել «ինքնարժեք» բաղադրիչը նվազեցնելու շնորհիվ, մինչդեռ այդ դրույթի գործող ձևակերպման պարագայում հստակ չի սահմանվում, թե ինչ ինքնարժեքի մասին է խոսքը (այսինքն ում կողմից սահմանված և որտեղ նշված ինքնարժեքի), որից չի կարող պակաս լինել մասնակցի գնային առաջարկը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, որի ընթացքում յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է տրվում ներկայացնելու նոր գնային առաջարկ, որը կարող է էականորեն տարբերվել սկզբնական առաջարկած գնից, ինչը նույնպես բաղկացած է «ինքնարժեք», «շահույթ» և «ավելացված արժեքի հարկ» նոր բաղադրիչների հանրագումարից:

Օրինակ. մասնակիցը կարող է նախապես հաշվարկված ընդհանուր արժեքի մեջ, կերամոգրանիտի և ՊՎՔ հատակների նյութերի արժեքները հաշվարկել յուրաքանչյուրը 10 000 ՀՀ դրամ և բանակցությունների ընթացքում գնի իջեցման և առավել մրցակցային գին

առաջարկելու հանգամանքով պայմանավրված՝ դրանց գները վերահաշվարկել՝ իջեցնելով մինչև 6 000 ՀՀ դրամ ու դրանց յուրաքանչյուրի 1 500 քմ ծավալի առկայության դեպքում, ընդհանուր գնիջեցումը նախապես ներկայացված ինքնարժեքից կկազմի 12 000 00 ՀՀ դրամ: Նշված օրինակները կարող են լինել բազմաթիվ, որոնք էլ հիմնավորում են գործող օրենսդրության և բանակցությունների առկայության պարագայում նոր գնային առաջարկ ներկայացնելիս պայմանական «ինքնարժեք» նվազեցման գործողությունները:

բ) Շինարարական աշխատանքների գնումների դեպքում.

Շինարարական աշխատանքների ինքնարժեքը նախահաշվել տեսականորեն անգամ հնարավոր չէ, և այն ձևավորվում է շինարարական աշխատանքների ավարտին՝ հաշվապահական հաշվարկների արդյունքում, փաստացի մուտքերի և ելքերի հանրագումարում, որտեղ չնախատեսված կամ չնախահաշվված ծախսերի չափաբաժինը էականորեն մեծ է այլ տեսակի աշխատանքների համեմատությամբ:

Շինարարական աշխատանքների գնման կողմնորոշիչ գին է սահմանվում նախագծի հիման վրա կազմված և քաղաքաշինական փորձաքննություն անցած նախահաշվային արժեքը, որը նախապես հայտնի է պատվիրատուին և որով շինարարական աշխատանքների ամբողջական արժեքը ներկայացված է մի քանի բաղադրիչով: Այն գոյանում է աշխատանքների արժեքներից, աշխատավարձի ֆոնդից, նյութերի գներից ու դրանց ծախսաչափերից, տրանսպորտային ու պահեստավորման ծախսերից, ինչպես նաև վերադիր ծախսերից ու ամփոփ նախահաշվով սահմանվող այլ կողմնակի ծախսերից, որոնք են կլիմայական պայմանների ազդեցությունը, աղբի մաքրման ծախսերը, ժամանակավոր շենք-շինությունների արժեքները, չնախատեսված ծախսերից, որոնց հանրագումարի վրա ավելանում է նաև ավելացված արժեքի հարկը, իսկ օբյեկտային նախահաշվի վրա ավելանում է նաև շահույթը, որը կազմում է ֆիքսված 11%: Նշված բոլոր ծախսերը սահմանվում են և ընդհանուր առմամբ ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող ծրագրերի համար նախահաշիվը կազմվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման և պատվիրատուի համար կրում է խորհրդատվական ու կողմնորոշիչ բնույթ: Վերոգրյալի վերլուծության արդյունքում կարելի է ամրագրել, որ բացառությամբ ավելացված արժեքի հարկի, որը պարտադիր ծախս չի համարվում բոլոր տնտեսվարողների համար (որոշ ընկերություններ աշխատում են շրջանառության հարկով), մնացած բոլոր ծախսերը միասին կկազմեն շինարարական

օբյեկտի ինքնարժեքը, որում կարող է տատանվել միայն սահմանված 11% շահույթը և մասնակիցների կողմից գնիջեցումները կարող են լինել միայն սահմանված շահույթից:

Բացի նշված հանգամանքը՝ թե գնումների մասին օրենքը և թե գնումների իրականացման մասին կարգը չի սահմանում գնառաջարկի ներկայացման մեթոդաբանություն, չի սահմանափակում ինքնարժեքի և շահույթի համամասնություններ և հղում չի տալիս նախապես կազմված և փորձաքննություն անցած նախահաշվային համամասնություններին և շահույթի առավելագույն չափին: Նշված հանգամանքով պայմանավորված այդ գնառաջարկները մասնակիցների կողմից ներկայացվում են տարբեր համամասնություններով՝ ընդհուպ մինչև շահույթի կշռի առավել մեծ բաժին քան ինքնարժեքն է և հաշվի առնելով դրանց ներկայացման հանդեպ պահանջների բացակայությունը՝ դրանք մերժման ենթակա չեն:

գ) Ինչ վերաբերում է ֆինանսական միջոցների բացակայության պարագայում բանակցային գործընթացի անցկացման կարգի վերաբերյալ բողոքաբերի բողոքին, ապա տեղեկացնում եմ, որ.

Բանակցությունների անցկացման կարգը նախապես հրապարակվել է պատվիրատուի կողմից և արձանագրված է եղել գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ, որը և սահմանված կարգով եղել է հրապարակված ու մասնակիցների կողմից անհամաձայնություն թե՛ նախապես և թե՛ բանակցությունների պահին չի ներկայացվել:

Բանակցությունների անցկացման ձևաչափի հիմնական սկզբունքը եղել է համահավասար պայմանների ստեղծումը բոլոր մասնակիցների համար:

Քանի որ Կարգի համաձայն բանակցությունների անցկացման համար սահմանվում է ժամանակ (վերջնաժամկետ), ապա վերջին պահին գնառաջարկ ներկայացնող ընկերությունը հայտնվում է ոչ մրցակցային պայմաններում և նույնիսկ այլ ձևաչափով բանակցությունների կազմակերպման դեպքում մնացած մասնակիցները միևնույն է զրկվում են նոր գին առաջարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում էլ նախնական գնային առաջարկների փոփոխությունները մասնակիցները, որպես կանոն, ներկայացնում են միայն սահմանված ժամկետի ավարտին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կոմիտեն ևս մեկ անգամ պնդում է, որ ընկերության հայտը գնահատվել է սահմանված կարգով՝ հիմք ընդունելով բանակցությունների արդյունքները, ուստի վերջինիս կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Մեդովկա, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ և ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ԱԳԱԹ-777» ՍՊ, «Զեթ-Պրոֆիլ» ՍՊ, «Տրանսունիվերսալ» ՓԲ, «Բիդեք» ՍՊ, «Տ-Քնսթրաքշն» ՓԲ, «Գևիգորյան Շին» ՍՊ, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊ, «Բաղրամյանշին» ԲԲ և «Ֆիլիշին» ՍՊ ընկերությունները:

3. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի 13.08.2020թ. ներկայացված բողոքը, ԳԲՔԱ-ՆԳ-2020/75 բողոքի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված**

ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. ***յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,***

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ ***գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝***

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. ***յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,***

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից...:

Այսպես՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Մեդովկա, ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ և ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքների միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ԱԳԱԹ-777» ՍՊ, «Զեթ-Պրոֆիլ» ՍՊ, «Տրանսունիվերսալ» ՓԲ, «Բիդեք» ՍՊ, «Տ-Քնսթրաքշն» ՓԲ, «Գրիգորյան Շին» ՍՊ, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊ, «Բաղրամյանշին» ԲԲ և «Ֆիլիշին» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է.

- հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնման գործընթացը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը 23.07.2020թ. կայացած նիստի արդյունքում որոշել է կասեցնել նիստը և ծանուցել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով 28.07.2020թ. ժամը 16:30-ին կայանալիք բանակցությունների մասին:
- հրավիրված բանակցություններին չեն ներկայացել «Բիդեք» ՍՊ և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊ ընկերությունների ներկայացուցիչները, որոնց գնային առաջարկները մնացել են անփոփոխ: Բանակցություններին ներկայացած «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» և «Տ-Քոնսթրաքշեն» ՓԲԸ-ները, ինչպես նաև «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն իրենց գնային

առաջարկները թիվ 2-րդ չափաբաժնի մասով թողել են անփոփոխ, իսկ ներկա գտնվող մյուս մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները՝

հ/հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Ագաթ-777» ՍՊԸ	465 732 087	32 601 246.3	99 666 666.7	598 000 000
2	«Զեթ-Պրոֆ» ՍՊԸ	500 000 000	-	100 000 000	600 000 000
3	«Բաղրամյանշին» ՍՊԸ	500 000 000	83 333 333.33	116 666 666.67	700 000 000

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ին և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՏՐԱՆՍՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՓԲԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ բանակցությունների այդ 3 որպեների ընթացքում ոչ մի մասնակից իր ներկայացրած գնային առաջարկը չի հրապարակել մյուս մասնակիցների համար, այլ գնահատող հանձնաժողովին ընդամենը տրամադրել է գրավոր իր կողմից ստորագրած փակ գնային առաջարկ, որի չափի վերաբերյալ մյուս մասնակիցները տեղյակ չեն դարձվել, ինչի հետևանքով մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցները այլևս չեն կարողացել վերանայել իրենց գնային առաջարկները՝ առաջարկված գնային առաջարկների մասին որևէ տեղեկատվություն չունենալու հիմքով»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2020/75 բողոքի շրջանակներում Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Բանակացությունների անցկացման կարգը նախապես հրապարակվել է պատվիրատուի կողմից և արձանագրված է եղել գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ, որը և սահմանված կարգով եղել է հրապարակված ու

մասնակիցների կողմից անհամաձայնություն թե՛ նախապես և թե՛ բանակցությունների պահին չի ներկայացվել:

Բանակցությունների անցկացման ձևաչափի հիմնական սկզբունքը եղել է համահավասար պայմանների ստեղծումը բոլոր մասնակիցների համար:

Քանի որ Կարգի համաձայն բանակցությունների անցկացման համար սահմանվում է ժամանակ (վերջնաժամկետ), ապա վերջին պահին գնառաջարկ ներկայացնող ընկերությունը հայտնվում է ոչ մրցակցային պայմաններում և նույնիսկ այլ ձևաչափով բանակցությունների կազմակերպման դեպքում մնացած մասնակիցները միևնույն է զրկվում են նոր գին առաջարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում էլ նախնական գնային առաջարկների փոփոխությունները մասնակիցները, որպես կանոն, ներկայացնում են միայն սահմանված ժամկետի ավարտին»:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով սահմանված պահանջներին համաձայն, Պատվիրատուի կողմից բողոքի առարկա հանդիսացող Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով միաժամանակյա բանակցություններ վարելու գործընթացն ուսումնասիրելու նպատակով, հիմք ընդունելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետը, այն է. «Գնահատող հանձնաժողովի՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է», 27.08.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/12914-2020 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին՝ խնդրելով առկայության դեպքում տրամադրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 2 չափաբաժնի մասով հրավիրված բանակցությունների վերաբերյալ տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 07.09.2020թ. թիվ 02/16.4/7038-2020 գրությամբ տրամադրել է Ընթացակարգի բանակցությունների ձայնագրությունը:

Այսպիսով՝ քննության առարկա դարձնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրված բանակցությունների վարման վերաբերյալ ձայնագրությունը՝ արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի շրջանակներում 28.07.2020թ. ժամը 16:30 հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ, և մինչև բանակցությունների մեկնարկը գնահատող հանձնաժողովը ներկայացրել է 2-րդ չափաբաժնի մասով բանակցությունների վարման կարգը, այն է. «տրամադրվում է 3 րոպե ժամանակ, որի ընթացքում յուրաքանչյուր մասնակից, եթե ցանկանում է կատարել նոր գնային առաջարկ, առանց բարձրաձայնելու պետք է առաջարկը գրանցի իրեն հատկացված թղթի վրա, ստորագրի և 3 րոպեն լրանալու պահին վերջնական գնային առաջարկը փոխանցի գնահատող հանձնաժողովի նախագահին և վերջնաժամկետը լրանալու ավարտից հետո մասնակիցները այլևս չեն կարող վերանայել իրենց կողմից ներկայացված գնային առաջարկները»:

Բանակցության մասնակիցները լրացրած թերթիկները տրամադրել են գնահատող հանձնաժողովին և վերջինս էլ հատկացված ժամանակի ավարտից հետո հայտարարել է թերթիկներում լրացված գները: Արդյունքում հայտարարվել է, որ ընտրված մասնակից է ճանաչվում «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն՝ 598 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկով:

Այսպիսով՝ ամփոփելով Պատվիրատուի կողմից Ընթացակարգի շրջանակներում 28.07.2020թ. ժամը 16:30-ին հրավիրված միաժամանակյա բանակցությունների վարման ընթացակարգը՝ արձանագրում եմ, հետևյալը.

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանվում է, որ ***<u>յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:</u>***

Վերը նշված իրավակարգավորումների իմպերատիվ պահանջն է, որ բանակցությունները կազմակերպվեն այնպես, որ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցները հնարավորություն ունենան տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները հրապարկվելուց հետո մինչև

բանակցության համար նախատեսված ժամկետի ավարտը վերանայեն իրենց գնային առաջարկները:

Կարգով նկարագրված բանակցային գործընթացի ընթացակարգում բացահայտվում են այն միջոցները, որոնց գործադրումը պետք է ուղղված լինի բանակցային գործընթացի նպատակին, մասնավորապես Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությունը վերլուծելով՝ կարելի է արձանագրել, որ բանակցային գործընթացը՝ ընդհանրապես, և բանակցային գործընթացի Կարգով նկարագրված ընթացակարգը՝ մասնավորապես, ուղղված են մի կողմից պետության համար անհրաժեշտ կարիքների հնարավորինս մատչելի գներով բավարարմանը, մյուս կողմից բանակցային գործընթացում ներգրավված տնտեսավորող սուբյեկտների՝ մրցակցության պայմաններում արդյունավետ տնտեսական գործունեություն իրականացնելուն. բանակցային գործընթացի՝ Կարգով սահմանված ընթացակարգն ուղղված է վերոնշյալ նպատակի իրագործմանը, և ընթացակարգային նման միջոցների գործադրումը չպետք է կրի այնպիսի ձևական բնույթ, որը չի ծառայի բանակցային գործընթացի բուն նպատակին: Ցանկացած գործադրված միջոց պետք է ուղղված լինի վերջնարդյունքի արդյունավետ իրագործմանը, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ ձևական առումով նույնիսկ պահպանված կլինի Կարգով սահմանված ընթացակարգը, սակայն այն ուղղված չի լինի բանակցային գործընթացի իրագործելիությանը, չի կարող համարվել իրավաչափ ընթացակարգ: Սույն գործով առկա փաստերը համադրելով վերոնշյալ մեկնաբանության հետ՝ գտնում եմ, որ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հրավիրված բանակցությունների նիստին բանակցությունների վարման համար հատկացված 3 րոպեն ավարտվելուց հետո միայն հրապարակելով մասնակիցների կողմից բանակցություններին ներկայացված առաջարկները՝ վերջիններիս հնարավորություն չտալով վերանայելու բանակցությունների նիստին առաջարկած գները, իրականացրել է մի գործընթաց, որը չի բխել բանակցային գործընթացի նպատակից:

Ամեն դեպքում հարկ է արձանագրել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով գնման գործընթաց կազմակերպող ցանկացած սուբյեկտի կողմից կազմակերպվող գնման գործընթացի հիմքում պետք է դրված լինի, ի թիվս այլնի, առավելագույնի և արդյունավետության սկզբունքը, որը նշանակում է, որ նվազագույն միջոցների գործադրմամբ պետք է հասնել առավելագույն արդյունքի՝ միաժամանակ ապահովելով

արդյունքի արդյունավետությունը, հետևաբար ցանկացած ընթացակարգային կանոն պետք է մեկնաբանվի հենց այս սկզբունքների համատեքստում:

Այսպիսով արձանագրում եմ, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում հրավիրված բանակցությունների նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից կիրառված բանակցության ձևը չի ծառայել իր նպատակին, ուստի գտնում եմ, որ պետք է դադարեցնել 28.07.2020թ. ժամը 16:30-ին կայացած միաժամանակյա բանակցությունները և բանակցությունների արդյունքներով գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ «Ագաթ-777» ՍՊԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա նոր բանակցություններ՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանված պահանջները՝ հնարավորություն տալով բանակցության մասնակիցներին՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները հրապարկվելուց հետո մինչև բանակցության համար նախատեսված ժամկետի ավարտը վերանայելու իրենց գնային առաջարկները:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված երկրորդ պահանջին, այն է՝ *պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Ագաթ-777» ՍՊԸ-ի և «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ, քանի որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժել «Ագաթ-777» ՍՊԸ-ի և «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի հայտերը, հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարները, իսկ այդ նվազեցված գնային առաջարկը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր նշված մասնակիցների ներկայացրած հայտերը,* սույն մասով գտնում եմ, որ բողոքի տվյալ պահանջը պետք է մերժվի, քանի որ Ընկերության կողմից վկայակոչված հիմքերն առաջացել են իրականացված բանակցության արդյունքում, իսկ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի 28.07.2020թ. ժամը 16:30-ին կայացած միաժամանակյա բանակցությունները,

հետևաբար նաև քննության առարկա չեն կարող դառնալ գնահատող հանձնաժողովի՝ դադարեցված բանակցությունների նիստում արձանագրված՝ մասնակիցների կողմից առաջարկած գները. հակառակ դեպքում ԳԲՔԱ-ՆԳ-2020/75 բողոքի քննության շրջանակներում բողոքի սույն պահանջի մասով կիրականացվեր համապատասխան քննություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ագաթ-777» ՍՊԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

3. Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Ագաթ-777» ՍՊԸ-ի և «Զեթ-Պրոֆ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**